



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

LGA
11665

1999

Quintuply myriapoda

Sarawak

25. 1876

ԾԱՂԿԵՔԸԴ

Ի լիսկատար կենսագրութենի օքբազան Հայրապետի
Ներսիսի Ե . վեհափառ եւ ազգասէր կարողի-
կոսի ամենայն Հայոց :

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Զ'համարիմ անշուշտ պիտոյ այն անցից ման-
րամասն ստորագրութիւնն , որ ինչ միանդամ
անցել էին ի Պոլիս և այլուր սկսեալ այն օրէն,
երբ Ղուկաս երջանկայիշատակ կաթուղիկոսն
վախճանեցաւ , և Յովսէփայ յանդիմնն բաժ-
ուեցաւ ճանապարհ առ աթոռն Հայրապետա-
կան : Որովհետեւ իմ գրութեան առարկայն է
միայն Ներսիսի գործն , և այն միայն կամիմ
պատմել . վասնորոյ մնացեալն կըթողում այնպէս
որպէս արդէն աւանդած ունի Պէրպէրեանն :

Բազմապատիկ փորձերն արդէն քաջ ծանօ-
թացուցել էին Միաբանութեան՝ Ներսէս վար-
դապետի բնաւորութիւնն , որ երբ՝ ինչկիցէ ա-
ռաջարկէ , այն այնպիսի կամապաշտութեամբ
առաջ կըտանի՝ որ չիներիր իմբք խափան լինել
նորան . վասնորոյ և երբ առաջարկեց նա սուրբ
Էջմիածնի միաբանութեան՝ Դանիէլիայս երկրորդ
անդամ ընտրութիւնն , թէպէտ շատերն կային
որ Դանիէլի ընտրութեան ոչ հաճ էին և ոչ հա-
ւան՝ նորա չափազանց հեղահամբոյր բարուց ա-

շագաւ , վասնորոյ իսկ առաջին նուագին առ-
օվակէփայ ընտրութիւնն եղել էին հակամէտ .
սակայն անհնարին կարծելով Ներսիսի դէմ մա-
քառին , կամաւ կամ ակամայ նախընտիր հա-
մարեցան խաղաղութիւնն , և խուսափելով աղ-
գային այն երկպառակութենէն , որ Ներսիսի
ընտրած ճանապարհներէն ոկսան գուշակել և
կասկածիլ , յանձնառու եղեն . և այնպէս Դա-
նիէլի ընտրութիւնն Ներսէսընդ ստանալն Յով-
ոէփայ բերանացի կամ բանաւոր կտակի լուրն,
մեկնելով թէ Յովիկ Խղճահար լինելով Դանի-
էլի տարապարտ աքսորանաց համար , այդ արել
է ի նշան զլնման և ի հատուցումն դրկանայ ,
հաղղուրեց , անաց և եղեւ , չրամնայեաց և հառ-
տատեցաւ :

Այլ այս իսկ կտակի անունն ; որ ըստ իրին
ոչ այլ ինչ էր , եթէ ոչ հոգեվարք մարդոյ վեր-
ջին չնցոյ արձակման ժամանակն յայտնեալ կամք ,
գաղափար տուեց հակառակի կողման ի լոյս ըն-
ձայել մի այլ գրաւոր կտակ :

Զաքարիեան Գրիգոր վարդապետն , (զոր Պէր-
պէրեանն կը յիշէ Եփրեմ արքեպիսկոպոսի թըլ-
թոյ մէջ , Պտտու” . Հայ” . Էջ 31 . թէ տեսէք այժմ ,
զի Արեգայ մի վատնելով զկայս հանգուցեալ
Յովսէփին իրու ընդ համրական դլուխ , իւրովի
յառաջոցոց և դարձնալէջ 32 , թէ արքեպիս-
կոպոսք բողոքէին և գանգատանս գրէին ի չար
Արեգայէն , թէ զհաւատ մեր ընդ ոտիւք էարկ
և կամի զյաւեիթն առաջացանել , զի լիքն
լիցի եղիսկոպոս) ունէր ձեռագիր յոյժ նման
Յովսէփ Արհուոյ ձեռագրոյն , որով երբ միան-

չամ և կամենայլ Գրիգոր՝ Յովսէփայ գրութիւնն
կարող էր այնպիսի ճարտարութեամբ խարդա-
խել , որ և ինքն իսկ Յովսէփ չմարթանայր որո-
շել իւր և նորա խարդախ ձեռադիրն : Գրիգորի
ձեռին կայր Յովսէփայ անքաւ ստացուածոց հետ
միասին և նորա եպիսկոպոսական կնիքն : Որով-
հետեւ երբ Յովսէփ ընտրվեցաւ կաթողիկոս փո-
քագրել տուեց՝ այնուհետև մշտապէս ի գործ
դնելի կաթողիկոսական կնիք . իսկ իւր արքե-
պիսկոպոսական կնիքն թողեց իւր ծանրութեան
մէջ : Այս կնիքով և նորա ձեռադիրի նման գրու-
թեամբ պատրաստուեցաւ այն կտակն , որ օգնեց
Դաւթին առաջ ստանալ կաթողիկոսութիւնն ,
և ապա Պօլայ ժողովրդէն ընդունելութիւն , և
սամանեան Դունէն հաստատելոյ խոստումն-բայց
երբ իմացուեցաւ խարդախութիւնն կտակն
նանրացաւ , Դաւթիթ գահավէժ հրատարակեցաւ .
և խարդաւանողն յաքսորս դատեցաւ : Եւ այս
կտակի յօրինուածն երբ և ուր տեղի ունեցաւ ,
չմաց անյայտ : Վլատիկաւկասի բերդի մէջ կա-
տարուեցան սորա ամենայն տնօրինական խոր-
հուրդքն :

Ի՞նչեցէ , Եմիամնի միաբանութիւնն , որոյ
զեակն՝ Ղուկաս կաթողիկոսի մահէն յետ՝ կրկին
Յովսէփայ կոնդակաց զօրութեամբ՝ Ներսէս վար-
դապետի ձեռն էր յանձնուել , երբ լուր էառ-
թէ Յովսէփ իր մահու ժամանակն կաթողիկո-
սութիւնն աւանդել է՝ տալ Դանիէլն , թէ և
բերանացի կտակաւ , Ներսիսի ճարապիկութեան
առջևն հակառակելոյ հնար չգտաւ , այլ իսկոյն
ատեան կազմեցին . (այս այն ատեանն է , որ զկնի

Քրկուց ամաց Սիւհոդոս կոչուեցաւ, յասրհուրդ արարին, և հաճութեամբ և հաւանութեամբ ամենեցուն թէ Յովսէփեանց և թէ Դանիէլեանց՝ արձանագիր յօրինեցին, և ամենեքին ձեռագրեցին. այս ատենական արձանագրի հիման վերայ Էջմիածնի մէջ ժողովոյ գումարումն հրատարակեցին. շրջակայ գաւառներէն բազում հոգէորականք և աշխարհականք հրաւիրանօք հաւաքվեցան Էջմիածին, և ամենեքեան յօժարեցան և կնքեցին Դանիէլի ընտրութիւնն. Ահա այս հրաւիրանաց և ընտրութեան բազմասորագիր թղթոց վերայ էր և ձեռագրութիւնն Դաւթի էնակէթեցւոյ, որ այն ինչ դարձել էր ի կ. Պօլսոյ, և այս թղթերն յանձնեցին չորս հրաւիրակաց՝ երկու եպիսկոպոսի և երկու վարդապետի որ տանին առ Դանիէլ յԵւդոկիա, և վաւերացուցեալ պատճէնս առաքեցին ի կոստանդնուպոլիս :

Այլ թէ ինչ հանդամանօք էր եկել Դաւիթ էնակէթեցին՝ կ. Պօլիսէն յէջմիածին, այն՝ Պէրպէտրեանն չէ գրել, և ինչ միանդամ գրել է, քաղուած է էնծեան Յօհաննէսի թղթերէն, որպէս ինքն Պէրպէրեանն կըխոստովանի, և չէր կարելի քան զայն աւելի ստոյգ ինչ քաղելանտի. Դաւիթ՝ խարդախ ճանապարհներով էր չորթել և յափշտակել Դանիէլի ձեռքէն կ. Պօլսոյ Պատրիարքական գաւազանն, և բորբոքել էր եկեղեցւոյ մէջ մեծ հրդեհ Էջմիածնի նուիրակ Գալուստ եպիսկոպոսի գրդուութեամբ. վասնորոյ և ինքն ևս նոյնօրինակ խարդախութեանց զոհ դնաց, և իւր յափշտակեալ գաւազանն ձեռնէ

ձեռն անցանելով՝ եհաս Ենծեան Յօհաննէսի ձեռն. որ երբ գրաւեց պատրիարքական աթոռն կամենալով հեռացնել կրկիսէն կասկածելի անձինքն, չարար խտրութիւն ինչ ներելի և աններելի հնարից մէջ, այլ առանց խղճահարութեան Դանիէլին աքսոր արժանացոյց ի Տենեդոս (Պօհճա ատասի) կզզին, և անտի Եւդոկիոյ առաջնորդութիւնն, Գալուստ եպիսկոպոսին ի կիպրոս կղզին և անտի Ակնայ առաջնորդութիւնն. իսկ Դաւթին խոստանալով իւր օգնութիւնն, խորհուրդ ետ դառնալ յէջմիածին և անդ գտանել հնար ինչ և ընտրիլ ի կաթողիկոսութիւն :

Այս երկու եպիսկոպոսք միոյ բնաւորութեան տէր լինելով, և երկուսի ևս նպատակն և շահն ի միումկիտի կենդրոնացեալ գոլով, եղեն սերտ քարեկամ, երկոքին ևս քարն ի ծոցի կրելով. և Դաւիթ՝ որ խոստացաւ դառնալ յէջմիածին, ոչ մարթացաւ իսկոյն կատարել, որոյ անակնկալ պատճառն էր այս նախ՝ զի երկնէր ի Ներսիսէ և ի հնարից նորա և ի յայտնի թշնամութենէ, զոր Ներսէս չունէր յայնմհետէ սքողել՝ որով հետև Գալուստ եպիսկոպոսի հետ գժտութիւնն այլ ևս հաշտութեան յուսոյ հնար թողած չէր. որովհետև թողեալ միւս ամենայն պարագայքն, Գալուստ եպիսկոպոսն Ներսիսի ուղարկած նուիրակն էր ի կ. Պօլիս, և Գալուստ՝ ինչ միանդամ արել էր, Ներսէս պատրաստ էր ամենայնն արդարացնել, նաև Դանիէլի դէմ արածն :

Երկրորդ՝ Գրիգոր վարդապետի անակնկալ նամակն, որ գրել էր Վլադիկաւկաս բերդէն, և նովաւ իմացում կուտայր Յովսէփայ մահն, որ

տեղի ունեցել էր 1801 Մարտի 11-ն կը յորդորէր որ Դաւիթ գաւն գործէ կաթողիկոսութիւնն իւր ձեռն անցունել, և այս նպատակաւ ուղարկել էր նորա ձեռքն՝ Յովսէփայ ճօխութենէն գանձ բազում, և խոստացել էր այլ ևս հասուցանել՝ որքան պիտոյ իցէ, և գրել էր՝ որ այն նամակի պատասխանւոյն ունի սպասել իմպղոկ ուր պիտի վերադառնայր, որ Յովսէփայ բեռներն փոխարկէր յառձեռն պատրաստ դրամ իմացաւ Դաւիթ Գրիգորի ամենայն դիտաւորութիւններն, և յայանեց իսկ Ենձեան Յօհաննէս Պատրիարքին, և նորա հետ միասին սկսաւ ի կողմն իւր որսալ հայազգեաց ամբոխն : Բայց մի անխոհեմ խօսք բարական եցեւ, որ նորա ամենայն մեքենայքն վերուվայր տապալեցան : Հայերն ստէպ երթեեկ կ'անէին պատրիարքարան, ուր և Դաւիթ կըյաճախէր : Հացավաճառաց մին՝ Պատրիարքի առջևն ասաց Դաւիթին : Հայր ստըր, էր պյտքան Էջմիածնի Հայրապետութեան կըցանկաս, լաւ չըր՝ որ Պոլոյ Պատրիարք մնայիր : Դաւիթ մնաց մի այնպիսի նեղ տեղ, ուր բազում անդամ կընկնի առիւծները յամեն կողմանց շուրջ պատեալ պաշարեալ կըթնի ի կենախուզ որսորդաց : Ո՞չ ապաքէն Պատրիարք էր կամաւ Դանիէլ, և այնպէս գլորվեցաւ աժոռէն, որ չիմացաւ թէ ով հանեցնորա ստքի առկէն տախտակներն : Զկամեցաւ ասել, եթէ արժանի էի պատրիարքութեան, էր երկու աւուրց մէջ դեռ աթոռոյ վերայ չնստած դահավեժ արիք, որ մի գուցէ թէ Ենձեան Յօհաննէսի պրոփէտ մէջ կասկած ձգէ, թէ սա դեռ

ևս մոռացած չէ պատրիարքութիւնն, և պատասխանեց . լաւ է որ Էջմիածնի ժամակոչ լինիմ, քան ի Պոլոյ Պատրիարք :

Միօրինակ դառնացան թէ ժողովուրդն Կթէ Պատրիարքն . որովհետև Էջմիածնի ժամակոչութիւնն վերադաս դրեց քան զմայրաքաղաքի պատրիարքութիւնն, որ Յօհան Ոսկեբերանի յաջորդութեան համապատիւ իմն էր և բարկութեամբ արտաքսեցին : Դաւիթ վարձեց ձի . և տաղնապաւ հասաւ Էջմիածնին . ուր տեսաւ որ Դանիէլ կրկին ընտրվել է, և նորա ընտրութեան թղթոյն ոչ միայն ձեռագրեց, այլև իւր կողմանէ մի առանձին հրաւիրանաց և շնորհաւորութեան նամակ գրեց առ Դանիէլ, և միարանութեան նամականուոյ հետ ուղարկեց :

Դաւիթ ունէր Էջմիածնի մէջ համախոններ, որոց ծածուկ պատմեց Պօլոյ յեղափոխութեց անցքն՝ որպէս ինքեան էր հաճոյ, և ցոյց տուեց ումանց՝ Գրիգոր վարդապետի Զաքարեան՝ նամակն, և ամենեցուն յոյս տուեց՝ որ Յովսէփայ գանձերն նոցա հետ եղբայրաքամին կանէ, եթէ օգնեն իրեն՝ որ կաթողիկոսութիւնն ստօնայ, Որք միանգամմառը Էջմիածնի խտղազութեան և բարօրութեան անձնատուր էին, միտք բերելով եղիազար Անթափցւոյ և բիւթիւր Պետրոսի կաթողիկոսաց անցքն, բացէ ի բաց հրաժարեցան . բայց որք Ներսիսի երկաթի դաւազանէն կըցանկային ազատուիլ, և յօժար էին նորա նըւաճման համար ամենայն զոհ յանձն առնուլ, խաբուեցան նորա ուկեց փողփաղնեւնքէն, և նորա հետ միացան, և սկսան Տփխիսեցւոց հետ

բանագնաց լինիլ :

Մելիք Արքահամ էնակոլոփեանն յարեցաւ
Դաւթի կողմն՝ և Դաւիթ Վրաց արքայորդւոյ՝
որ ունէր ի հարմութեան գդուստը հայազգի
Աբամելիքեան իշխանազնէի՝ կամքն որսացաւ,
և նամակ զրել տուեց առ էջմիածնի միաբա-
նութիւնն, որ Դաւթին տան կաթողիկոսու-
թիւնն. այլ ուխտապահ միաբանութիւնն յան-
դիման կացուցանելով իւր առ Դանիէլ գրեալ
նամակի պատճէնն, և Դաւթի ստորագրութիւնն
մերկապարանոյ արար արքայորդւոյ միջնորդու-
թեան անպատշաճութիւնն :

Դաւիթ տեսանելով՝ թէ արքայորդին չ'մար-
թացաւ առնել ինչ դիմեց առ խանն Երևանայ,
և ոչ խնայելով Զաքարեան Գրիգոր վարդապե-
տի ուղարկած ոսկւոյն՝ հաճեցոց նորա սիրտն,
և նա տուաքեց ի սուրբ Էջմիածնի երեք Պարսիկ
երեւլի իշխանք, որ Մերաբանից սիրտն փոխեն
և համոզեն՝ որ կաթողիկոսական աթոռն նուի-
րեն Դաւթին : ի՞նչ կատկած կայ, որ թէ ոմանք
ի սրտէ չկամէին Դաւթի կաթողիկոսանալն,
բազումք ևս յերկիւղէ Ներսիսի՝ սկսան մերժել
Դաւթի առաջարկութիւնն : Օր չէր անցանէր՝
որ Զաքարեան Գրիգոր վարդապետէն նամակ և
դրամ չդայր թէ առ Դաւիթ և թէ առ համա-
խոհս նորա, որ ոսկիքն կ'առնուին, և ի հանոյա
ներսիսի՝ Դաւթի ընտրութիւնն կրմերժէին :

Այն ժամանակն Դաւիթ հասանելով յուսա-
հատութեան ծայրն՝ կաշառօք կուրացոյց երեա-
նայ Մէհմէտ խանի աչքն, և նա ուղարկեց էջ-
միածն Պարսից զօրաց Լեգէնն մի, որ հաւսաց

նման որսացաւ միաբանից խումբն, և մուծին ի
տաճար սուրբ Աթոռոյն էջմիածնի, և սուսերօք
և բրօք ահ և սպառնալիք տալով՝ բռնութեամբ
օծել տուին Դաւթի գլուխն և աջն, և նստե-
ցուցին Լուսաւորչի գահն : Այս ամենն ժամա-
նակակից երդաբանն այսպէս կըհամառօտէ յեր-
գըն, որ ի գիմաց Էջմիածնի որպէս ողբ՝ ի լսե-
լիս կայսեր Ռուսաց կըհնչէ : Սարսեցուցիչն զօ-
քաց երկնից՝ սուրբ Փեսայն իմ և ձեր գահից,
աղդէ ինձ զի ողբերդեցից, զբողոքս յունկա
ձեր հասուցից ահա ինքնակալ կայսր համակ
Ռուսաց . յոյս փրկութեան իմ ի վշտաց . զերծն
զիս ի Դաւթի ժանեաց :

Եօթնագլուխ այս սե գաղան, եցել զքող իմ
գեղազան, խլեալ զջեառն Տէգ սրբազան, ե-
բեկ զկարդաց հին գաւաղան : Այս կ'ասէ այն
մասին, որ մինչ Դաւիթ ի 1801 ամի, Ապրիլի 28
օծվեցաւ, Զաքարեան Գրիգոր վարդապետի
ուղարկած ոսկիքն արդէն վճարել էին, ծածուկ
գողացաւ սուրբ Գեղարդն՝ որ սրբազան Տէգ
Տեառն կանուանէ Երդաբանն, և հանգերձ այլ
ոսկեղէն անօթովք կըդնէ սիսուան պարկի մէջ,
կամելով ուղարկել իւր եղբօր տունն, որ վա-
ճառէ կամ գրաւ գնէ, և վաղվաղակի դրամ
հասուցանէ : Այլ հանգիպեցաւ անդ Յօհաննէս
արքեպիսկոպոսն (որ յետոյ անուանեցաւ կեն-
դանի նահատակ), աղատեաց զսուրբ Գեղարդն.
որոյ վագն և Դաւիթ բանտարկելով շատ խոշ-
տանգանք տուեց նորան . որպէս Պէրպէրեանն
կըյիշէ նախ միաբանից նամակի մէջ էջ 25 .
«մինչ գողացեալ զսուրբ Գեղարդն և զայլ սըր-

բութիւնս և գանձս պատուականս և բարձեալ
սիսուամբ ի վերայ գրաստու առաքէր ի տուն
եղբօր իւրոյ . զոր ըմբռնեաց և դարձոյց կեն-
դանի նահատակ Յօհաննէս արքեպիսկոպոսն .
և ի թուղթն Եփրեմայ՝ էջ 32. ասէ՝ “ Զրնիկ Պօլ-
սեցի կենդանի նահատակ Յօհաննէս արքեպիս-
կոպոսն , որ գրեթէ ի վերայ Գեղարդեանն
Քրիստոսի զկեանս իւր դնէր . . . զայնպիսի Հա-
րազատ որդին տայ ի կապանս , արկանէ ի բանտ
և Հարկանէ զգլուխն : Յետոյ կըսկսի պատմել
թէ այս կոխւն ուստի ծագեցաւ , և յիշելով
Յովսէփայ բերանացի կտակն՝ որոյ ինքն էր ա-
կանատես՝ կերգէ այսպէս : Բարունն ազդէր
ազդին ընտրել Յաջորդ ինքեան զոտէր Դանիէլ,
զոր Հաճեցաւ կայսրդ Հաստատել Հրովարտակաւ
անշուշտ վճռել : Բարուն ասելով ասա՛ Յովսէփին
Կիմանայ , որ մերձ ի մահ ասաց իւր դիտաւոր-
ութիւնն , և նորապասակ կայսրն Ալէքսանդր
Պալովիչ , մինչ եկել էր Մոսկվա մայրաքաղաքն
իւր թագագրութիւնն և օծումն տօնախմբել ,
Եփրեմի ձեռամբ ընկալեալ սուրբ Էջմիածնի
միաբանութեան աղերսն , խոստացել էր Դանի-
էլի ընտրութիւնն Հաստատել , մինչ չէր Դաւիթ
Եղիշեր ապստամբութեան բարձրացրել :

Յետ որոյ զարմացմամբ և զարհուրանօք կը
պատմէ երգաբանն՝ Դաւթի անակնկալ բռնու-
թիւնն և յաթոռ Հայրապետական թեակոխելն .
ով ապառում ժարիհանաց , յանկարծ վառեալ
ի նախանձ փառաց , Ելից զգութքն տրովք կա-
շառաց , սասանեցոյց զխումբն արհեաց : Այս էր
առ Երեանայ խանն դիմելն , և երեք Պարսիկ

իշխանք բերելն , որով զարմացոյց և սարսափե-
ցոյց զդունդ միարանից զկնի որոյ կըյարէ . այն
ինչ Դաւիթ յուսահատութեամբ սկսաւ գործել ,
վիթխար գաղանն մինչ կատաղէր՝ զմահմէտա-
կան պահակս բերէր , զԱրհիսն բոլոր բռնաբա-
րէր , միւռնակէղ վարազ լինէր .

Զարմանալի էր այս տարօրինակ դիմուածն ,
որ Յովսէփայ մահէն դեռ հազիւ անցել էր 40
օր , որ ահա Դաւիթ նստել էր ի գահ Թագէոսի
Առաքելոյն և սկսէլ էր այնպիսի բռնութիւններ
ի գործ դնել , որ Ղաղար կաթողիկոսի կենսա-
գրութեան մէջ անհաւատակի կերևէին :

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Զաքարեան Գրիգոր վարդապետն իւր դա-
շնաց վերայ Հաստատուն մնաց . Յովսէփայ ինչըն
և ստացուածքն պարտակեց , և ինքն ծոցերն
ին ոսկով դնաց ի Տփիսա , և անտի յէջմիածն՝
ուր Դաւիթ արդէն կաթողիկոս էր , միաբանու-
թիւնն բոլոր բանտարկեալ , Էջմիածնին լի Պար-
սիկ զօրօք , և իւրաքանչիւր կարդաւորի վերայ
կայր մի սպառազէն պահապան Պարսիկ , որ կը
զգուշանային , որ յինի թէ միաբանից մէջէն ոք
կարողանայ նամակ գրել , և ծանուցանել ազ-
գին՝ Էջմիածնի թշուառ վիճակն : Դաւիթ ստա-
ցաւ իւր սիրելի Զաքարեան Գրիգոր վարդա-
պետի աշակամբոյըն , և գրեց իւր այն ինչ օծ-
եալ աջն առաջին ձեռնադրաթեան՝ Գրիգոր
վարդապետի գլխին , և ձեռնադրեց եպիսկո-
պոս , և Հայրապետական նախակին կոնդակաւ
հաստամեց Յովսէփայ տուած Գրիգորին՝ Ռու-
սաստանի Հայոց Առաջնորդութիւնն , և Գրիգոր

նոր եպիսկոպոսն հրապարակաւ՝ ի հանդիսի համախումբ միաբանութեան , որ այն օրն նորա ձեռնադրութեան պատճառաւ բանտէն ազատուել էին և նորա պատրաստած համադամ խորտկօք ճոխացած ճաշն պիտի վայելէին , հանեց ծոցէն Յովսէփայ կտակն , և մատոյց Դաւիթ կաթողիկոսին : Ներսէս վարդապետն այս ամենայն գրեալ ծանոյց Եփրեմին՝ որ էր յԱստրախան . և այսու ոչ շատացեալ ի դիմաց ամենայն երկելի եպիսկոպոսաց ևս գրեց անհամար թըղթեր , որք ձեռադրեցին և կնքով իւրեանց դըրշմեցին և ցրուեցին ամենայն հայաբնակ քաղաքներն . որով ամենայն տեղ իմացուեցան Դաւթի և Գրիգորի հրաշագործութիւններն :

Մինչ այս ամեն անցքն կանցանէին էջմիածին՝ ինչ կանէր արդեօք ողորմելին Դանիէլ , որ երկու անդամ ընտրուել էր կաթողիկոս : Տակաւին հրաւիրակաց ձեռքէն ստանալով էջմիածնի միաբանութեան ընտրութեան և չնորհաւորութեան բազմակնիք նամակն՝ Եւդոկիայէն ելեալ նոր էր հասելբայազիտ , որ հասան առ նա Ներսէսի և բոլոր միաբանից թղթերն հետզհետէ , և ծանուցին Դաւթի արած յեղադարձն , և նա ստիպեցաւ երեք վանք (իւչ քիլիսա) կոչեցեալ մենաստանի մէջ պատուարիլ : Ներսէս վսաւհ էր , որ Դանիէլ այնքան խրատուած է այժմ , որ միւսանգամ Մանուէլ վարդապետի խոր հուրդէն չի շեղիր . այն պատճառաւ ինչ կըկամէր Դանիէլի համար տնօրինէր , կըգրէր Մանուէլին , և բատ այնմ ամենայն ինչ կողինէր : Ներսիսի մտաց մէջ լցո ծագեց , որ Դանիէլ արդէն

իւչ քիլիսա վանքի մէջ օծվի կաթողիկոս . միուրանից հետ խորհուրդ արաւ , որ ամենեքին ի բանտու և ի կապանս կըկոչկոնէին , բազմաստորագիր նամակ թացրեց ի Պօլիս և առ Եփրեմ , որ ազգն յօժարի առայն , և Դանիէլին Հայրապետական օծութիւն մատակարարուի իւչ քիլիսա : Եփրեմին հաճոյ թուեցաւ այս՝ Ներսէսին նիւթեալ և բոլոր միաբանութենէն հաճեալ և ընկալեալ հնարն , և 1801 Սեպտեմբեր 19 թուղթ գրեց ի Պօլիս առ Պատրիարքն Ենձեան Յօհաննէս Եպիսկոպոս , և առ Ազգապետս Հայոց , որ Դաւթի կաթողիկոսութիւնն չընդունին և յօժարին՝ Դանիէլի կաթողիկոս օծուին իրաւացի համարել և թոյլ տան՝ որ իւչ քիլիսա կատարուի :

Եփրեմ արքեպիսկոպոսի նամակն՝ Կ. Պօլսոյ Հայոց ազգի վերայ այն ազգեցութիւնն ունեցաւ , ինչ յշացած ունէր Ներսէս իւր առաջնորդական մտաց մէջ , երբ այն նամակն կըշարադրէր և էջմիածնի բանտարգել Միաբանութեն կըխորհէր գրել տալ : Ենձեան Յօհաննէս Եպիսկոպոսն մեծ ոմն կարծելով իւր գլուխն , որ Ուռասաստանի Առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսն այսչափ է գրել առ նա , ժողովեց հայազգի իշխանքն և նոցա յանդիման ընթերցաւ այն թուղթն , չիմանալով՝ որ այն իւրյանցանաց դատակնիքն է և Դաւթի բազմագիմի մեքենայից քակտիչն :

Պօլսոյ հայազգիք աչքերն բացին , ճանաշեցին թէ Դաւթիթն որպիսի ոք է , և իւրեանց Պատրիարքն՝ որ Դաւթի համախոհ է և ամենայն

մասամբ ջատագով՝ որքան իրաւամբ է ստացել այն օրհասական Ենձեան մականունն, վաղվազակի ի խորհուրդ համախմբեցան, այն Ենձեան Յօհաննէս եպիսկոպոսի ձեռքէն առին Պատրիարքական իշխանութիւնն, և որպէս թէ ի վրէծ Դանիէլի նորան աքտորանաց տեղ նշանակեցաւ Եւդոկիա, ուր և տարագրեցաւ Հոկ. 29 և նորա տեղն նստաւ Պատրիարքական աթոռն Խամսեցի Գրիգոր Եպիսկոպոսն՝ որ Երբեմն նուիրակ էր սրբոյ Աթոռոյն Էջմիածնի. և այս տեղի ունեցաւ նոյն տարին ի Դեկտեմբեր 19:

Այս Խամսեցի Գրիգոր Պատրիարքն իւր առաջին գործն այն արաւ, որ Եփրեմարքեպիսկոպոսի նամակն յարդութեամբ ընկալաւ, իւր բարեկամաց օգնութեամբ աշխատեցաւ և հանեց օմանեան բարձր Դանիէլի կաթողիկոսութեան հրովարտակն, որոյ աղադաւ եկել էր Ներսէս վարդապետն ի եւ Պօլիս, և յանձնեց նորան այն հրովարտակն, և կաթողիկոսի օծութեան Մաշտոցն, որ տանի հայագիտ, և անդ կատարեն Դանիէլի օծութիւնն: Ներսիս խորհրդատուութեան ունկն դնելով՝ գրեց նամակ առ Միաբանութիւնն Էջմիածնի, և առ Աղթամարայ կաթողիկոսն, և առ ումանս Եպիսկոպոսաց, Առաջնորդաց շրջակայ վիճակաց Երթալ համախմբիլ ի Բայազիդ, և մեծահանդէս փառօք կատարել Դանիէլի օծութիւնն ի կաթողիկոսութիւն ամենայն Հայոց: Խամսեցի Գրիգոր Պատրիարքի գրուածոց զօրութեամբ, որոց օրինակն տուել էր Ներսէս, Երբ ինքն Ներսէս վերադարձաւ արքայական հրովարտակն և Մաշ-

տոցն ի ձեռին, ժողովեցան բազմութիւնք եւ պիսկոպոսաց և վարդապետաց, և Սիւնհոդոս խմբեալ քննեցին Դաւթի անպատեհ արարքն և դատապարտեցին, և հրատարակեցին զնա օծեալ ընդգէմ կանոնաց Եկեղեցւոյ և օրինաց սրբոց Հարց, վասնորոյ և լուծեալ ի կարգէն և Ենթարկեալ ապաշխարութեան, և զձեռնադրեալն ի նմանէ յեպիսկոպոսութեան՝ նոյնպէս ապօրինի մինչև ի տնօրէնութիւն օրինաւոր Հայրապետին: և ապա վճռեցին Դանիէլի վերայ կատարել օծութիւնն: Եւ այս հիման վերայ Դանիէլի օծութիւնն կատարվեցաւ ի 1802 ի Մայիսի 28 սպասաւորութեամբ կարտպետ կաթողիկոսին Աղթամարայ, և ընկերակեցութերեցտասան Արքեպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց, Եօթնեւտասան ականաւոր վարդապետաց և այլ բազում կրօնաւորաց, Քահանայից և Եկեղեցականաց և աշխարհականաց, և նոյն օրն գրուեցաւ և այս սուրբ ժողովզ գործքն, որոց նախագահ էր նոյն կարապետ կաթողիկոսն: Եթէ Դանիէլ սրբազնի կամացն թողած լինէին այս ամենն ապաստան, անշուշտ պիտի անցանէին խաղաղութեամբ, և Դանիէլ յօֆար էր մէալ այնպէս՝ որպէս և էր՝ Երկիցս ընտրեալ ի կաթողիկոսութիւն և ոչ ժամանեալ ի պատուանդան Աթոռոյն: և յայնմէետէ՝ կամ կը վերադառնայր իւր առաջնորդարանն՝ Եղողիկա, կամ կերթայր ի Պօլիս՝ ուր ազգն բաւական էր տալ նմա ոգեպահիկ պատառ հացի, և կամ հրաման կառնոյր Դաւթէն Երթալ յէջմիածին, և անդ անցուցանել իւր կենաց մնացորդն միա-

քանից կարգի մէջ : Եւ յայնժամ դաւիթ տեսանելով՝ որ հակառակորդն նուաճուեցաւ , գուցէ ինքն ևս ի բաց դնէր բռնաւորութեան այն երկաթի գաւազանն , որով՝ իբրև զանօթս բրտի կըփշէր զամենեսին՝ թէ զարդարս և թէ զմեղաւորս . և որովհետև առանգամ մի օծուել էր ի կաթողիկոսութիւն՝ օրբատօրէ գուն կործէր իւր նախաձընդդէմ թշնամեաց հետ իրաւախոհ լինել , և զայրացեալ ազդի հետ հաշտիլ . որով և դանիէլ ևս չէր ընկնիր այն՝ փորձութեանց մէջ , յորս պարանեցաւ , և ազդի մէջ չէր ընկնիր այն մեծ երկպառակութեան հերձուածն , որ՝ քան զչումայ անթիպապութեան պատառուածն պակաս չէր : Բայց տես՞որ ի պայքարի կայր Ներսէս և գործակից իւր Մանուէլ՝ ընդ նմա : Սոքա էին՝ որ դանիէլին թոյլ չուուին ըսել , որպէս ինքն հոգւով չափ կըբաղձայր : Սոքա էին՝ որ Եփրեմին ուժ տուին գլուխ ամբառնալ , ապա թէ ոչ նա՝ դեռ քանի՞ որ էր այնուհետև անցել , որ մահուչափ կըզդուշանայր որ ծնրադրութեան ժամանակն՝ Աստրախանայ եկեղեցականք նորա վեղարն ոտնակոխ չանէին : Ներսէս կըշարադրէր թղթերն և կըհասուցանէր առ Եփրեմ , և նա պարզագրել կուտայր և կառաքէր՝ ուր Ներսէս էր նշանակել . և Ներսէս քաջ գիտէր իւրաքանչիւր անձանց յարմարել գրութեանց ոճն , ի դիմաց որոց պիտի գրուէին : Այս խաղերն դանիէլի հետ ևս կըխաղյին առանց իրիք խղճահարութեան . ով գիտէ՝ թէ ամեն օր քանի՞ հարիւր նամակ կամկոնդակ կըգրէին , որոց ներքութեանց իւրաքանչիւր նամակ դանիէլ իւր ա-

նունն ձեռագրէր : Ո՞վ թէ որքան ծանրացել էր նորա ուսոց վերայ կաթողիկոսական անունն , և փշեայ պսակի նման հոգեպահանջ սլաքներով կըծածկոտէր նորա գլուխն Հայրապետական թագն : Այս միջոց թող գայր Թագէոս , թող աչքն բանայր Գրիգոր ; և տեսնէին , թէ իւրեանց սուրբ Աթոռուոյ վիճակն ցոր աստիճան էին հասուցանել նոցա ժառանգորդքն : Նոցա վարդապետն Յիսուս՝ որ ասել էր թէ արքայութիւնի կըկնից բռնարարի , և բռունք յափշտակեսցեն զնա , երբէք չէր ունեցել ի մոնի՝ թէ իւր հետեղողք մի օր պիտի Հայրապետական աթոռուոյ վերայ գարձուցանեն այն բռնութիւնն : Հոռմայեցիք և Պարսիկք՝ զչայոց ազգն նուաճել կամելով՝ թագաւորութիւնն պատառեցին քանից , Տիգրանեան Արտաւազդէն յետ վերին Հայք և ստորին Հայք բաժանեցին յիրերաց : Թէոգոս կայսրն՝ Արշակ և Վաղարշակ թագաւորեցցց , որ Հայոց պյմն տկարանայ : Արկադէոս և Շապուհ Հայաստան կիսեցին : Հագարացիք՝ Բագրատունեաց թագաւորութեան մօւն Արծրունեաց թագաւորութիւն , և յետոյ Սիւնեաց թագաւորութիւն , և կարուց թագաւորութիւն հնարեցին , որ ազգն միշտ երկպառակութեան մէջ մնայ : Այդ ցաւոց վերջն այն եղեւ որ Հայոց ազգն մնաց վերջապէս առանց թագաւորի : Այդ անմիսիթար ժամանակն վառ էր միայն Հայրապետական կանթեղն . այն ևս սկսեցին պատառել հերձանել . փոքր ինչձէթ տարին Աղթամարայ կանթեղի համար , փոքր ինչ ևս գանձապարայ կանթեղի . կէս ձիթոյն առաւ

Սիս . Ի՞նչ մնաց սուրբ էջմիածնի կանթեղի մէջ՝
Հայոց նուազած ազգն յանկարծ ունեցաւ
չորս Հայրապետութիւն . որ թէ օքինաւորապէս
նկատենք , այնքան սակաւաւոր է , որ հազիւ
թէ կարէ կազմել միոյ Հայրապետի գաւազանի
ներքոյ հօտ փոքրիկ : Մինչ ազգի բարեաց փա-
փաքողք հետամուտ կըլինէին բառնալ այն ազ-
գապատառ չորեքութիւնն , և դարձեալ Գրի-
գորի՝ ի չորս մասունս հերձեալ մարմինն մրաւո-
րել մի էջմիածնի Աթոռոյ վերայ , և ահա երկե-
ցան էջմիածնի գահի ծուատողք երկու կաթու-
ղիկոսք , որոց մէկն՝ առանց ազգի հրաւիրանաց
զանձն ընծայեցոյց , և միւսն՝ ներսէս շարադրեց
երկու կաթողիկոս միւնոյն Աթոռոյ վերայ երե-
ւելոյն զինի՝ Ի՞նչ զարմանալի էր , եթէ իւրա-
քանչիւր վիճակի մէջ ևս երկերկու Առաջնորդք
ստեղծուէին : Ահա Ռուսաստանի Հայոց թեմ
ստացաւ երկու Առաջնորդք . մին էր Եփրեմ
արքեպիսկոպոսն , և միւսն Գրիգոր նոր եպիս-
կոպոսն որ նոյնպէս զանձն կըկոչէր արքեպիս-
կոպոս : Արդէն բովանդակ ազգն պատառուել
էր յերկուս բաժինս , մին եղել էր Դաւթեան և
միւսն Դանիէլեան : Ռուսաստանի հայերն չորս
պատառ եղեն . նոքա Դաւթեան և Դանիէլեան
լինելով՝ կրկին հերձուածոյ ենթարկեցան , և
եղեն ոմանք Եփրեմեան և ոմանք Գրիգոր-
եան : Ոմանք լինելով՝ Դաւթեան համախոն էլն
Գրիգորի , և այլք՝ լինելով՝ ի կողմն Դանիէլի՝
բարեկամ էին Եփրեմի : Այս՝ բնուկան էր : Բայց
գերբնապէս հակառակ այսմ՝ կային բազումք
որ հաճէին Դանիէլի Հայրապետութեան , և կը

սիրէին զԳրիգոր , վասնորոյ և էին համանգա-
մայն Դանիէլեան և Գրիգորեան . որպէս և բա-
զումք՝ յօժար էին զի Եփրեմ իցէ Առաջնորդ
Եփրեան՝ ընդ իշխանութեամբ Դաւթի , և այսու
էին համանգամայն Դաւթեան և Եփրեմեան :

Այս ոսպնաթանի պատրաստողն չէր անձն ա-
ռանց պամառնանաց՝ ընդ ասունն Յակոր , այլ
ներսէս , որ ըստ իւրում ազգամիութեան թէ-
պէտ կարկառեց՝ ում և կամեցաւ , այլ նովաւ
չյաջողեց ազգի համար ապահովել անդրանկու-
թիւն , կամ հայրական օրհնութիւն . ծշմարտու-
թեան պաշտպան կանգնեցաւ՝ ծշմարտութեանց
զոհերով , ազգի իրաւանց ջատագով հանդիսա-
ցաւ՝ հիմն խախտելով , Երեփովի պարիսպն բարձ-
րացոյց անդրանկաւ , և զդրունն կանգնեաց
կրտսերաւ : Ազգի պատառումն՝ անկարկատելի
էր , և պատառուածն՝ մեծ : Այնպիսի գերդաս-
տաններ կային՝ որ այրն՝ մէկ կողմի համախոն էր
և կինն՝ միւս կողմի . հայրն՝ Դանիէլեան էր , որո-
գիքն Դաւթեան : Երիտասարդն նշանախօսեալ
էր օրիորդի . աներն Գրիգորեան գոլով՝ Երբ
լսեց՝ թէ Փեսայն Եփրեմեան էր , քակտեց նր-
շանն , և գուստրն այլում հարանացոյց :

Գլուխ Երրորդ:

Գրիգոր՝ Եպիսկոպոսութիւնն ստացաւ՝ ոչ Յով
ոէփ գեղեցկի գնով քսան գահեկանի , և ոչ Յի-
սուսի գնով՝ Երեսուն արծաթոյ , և ոչ անդամ
Աբրահամու գնեալ կրկին այրի գնով չորսհարիւր
սապերի , այլ Յիսուսի մարմինն գոլացեալ համ-
բաւելոյ աղագաւ տուած արծաթ յոյժ անուան-
եալ կշռով , զոր Նարեկացին կրկնակապէն կա-

շառագութեան մէջ է առել. և Յովսէփայ
Պանահնեցւոյ կնքով խարդախեալ իւրաստեղծ
կտակն՝ որպէս գայլի բերանն յետկար տալով,
և խոստանալով՝ որ Ռուսաց կայսերական դռնէն
հաստատութեան հրօվարտակ պիտի հանէ Դաւ-
թի կաթողիկոսութեան մասին, Վասակի նման կը-
վազէր դէպի Ռուսաստան, առնուլ զվարձ իւ-
րոց երախտեաց. և այսպէս ի վերջ Մայիսի 1801
թուղն հասաւ Տիֆիսի. ուր քանի որ առաջ ե-
կել էր Դաւթի ճանկերէն անձնապուրծ ճողո-
պիտեալ գեղարդ ակիր Յօհաննէս եպիսկոպոսն
Ակնեցի, որ Գրիգորի համար Ղեռնդ երէց դառ-
նալով ասաց. եթէ դու երթաս համար Աստրա-
խան և Ռուսաստանի առաջնորդութիւնն ստա-
նաս, ապա չէ Աստուծոյ ընդիս խօսեալ:

Առանց երդման պիտի հաւատաք՝ որ գեղար-
դակիր Յօհաննէս եպիսկոպոսն՝ Աստուծոյ հետ
խօսած չէր, և Աստուած ևս ժամանակ չունէր
նորան յայտնութիւննէր անել, բայց այս քա-
ջայայտ էր, որ տեսել և ընթերցել էր գեղար-
դակիրն՝ Ներսիսի թուղթն առ Եփրեմ, և այն
ևս գիտէր՝ որ Եփրեմ որպէս մեքենայի ճեռու-
Ներսիսի՝ ի մաղէ չի վրիպէր: Եւ որպէս դուշա-
կեց գեղարդակիրն՝ այսպէս իսկ տնօրինեցաւ
Գրիգորին: Գրիգոր, որ երկու շաբաթ առաջ
ի Մողդոկ Յովսէփայ գանձուց պատճառաւ Ով-
սաննաներով էր ընդունելութիւն դտել, այժմ
տեսաւ նոյն հայազգի ժողովուրդն յանդիման
իւր կանդնեալ քարերով և բիրերով. մինչև
զարմանալ նմա և հարցանել Գողիաթի պէս,
միթէ ևս շուն եմ, որ քարամբ և ցպովք էք

ինձ դիմաւորել. և նոքա նոյնը պատասխանե-
ցին՝ ինչ Դաւթիթ էր պատասխանել:
Զուր էր Գրիգորի զարմանալն, որովհետեւ
քաջ գիտէր ինքն, որ Մողդոկցիք նորան պա-
տիւ տալոց միտք չունէին երբէք. նա՝ Մողդո-
կի փափկասնունդ գեղանոյշ հարսանց մէջ Ով-
սաննայ անուամբ սանամայրներ ունէր, նոցա
բարեկամք և ազգականքն էին նորան ովաննայ
երգողներն. իսկ ծերերն՝ որ ի սրտէ Եփրեմեան
էին, և այժմ՝ Դանիէլեան ևս են. դեռ նա չէր
հասել Եջմիածին, որ միարան Աստրախանայ,
Ղզլարայ, Մոսկովայ և Պետերբուրգի հայազգ-
եաց հետ բազմաստորագիր նամակ էին գրել
առ Դաւթիթ, որ Գրիգորին չձեռնադրէ, որով-
հետեւ նա Ռուսաստանի Առաջնորդութեան ըն-
դունակ չէ. և թէ ինչ Յովսէփ խօսել էր, այն
իւր կամօք էր և Գրիգորի դրդմամբ, և ոչ ազ-
գի բաղձանօք. այլ Դաւթիթ կուրացեալ ի կա-
շառաց Գրիգորի՝ և ճեռնադրեց Նիկոլի պէս
հակառակ կամաց ժողովրդեան, և Առաջնոր-
դութեան կոնդակաւ ուղարկեց ի Ռուսաստան.
ուր արդէն կայսրարքայական հրօվարտակն
պատրաստել էր նորա համար ի մէջ սահմանացն
Ռուսաց բանտարկութիւն :

Այսպէս Գրիգոր նոր արքեպիսկոպոսն ընկաւ-
ծուղակ՝ որ նորա ոտից համար լարելէր մեծաւ
իմաստութեամբ Ներսէս. և տեսնելով՝ թէ ոչ
Աստրախան, ոչ Ղզլար, ոչ Մողդոկ, ոչ Նոր-
սախիջևան, և ոչ Խրիմ Երես չունի, դիմեց
Գրիգորիալուսոյ կողմն, ուր Յովսէփայ Արղութ-
եանցի Եղբօրորդին՝ իշխանազնեայ Բարսեղն՝ ի

հարանութիւն իւր ունելով Բուլղօղլու Պօղոս
աղայի միակ դուստր Աննայն , մտել էր նորա
մեծագանձ ճոխութեան ժառանգութիւն , և
կուսակից էին Գրիգորի , և հակառակորդ Եփ-
բեմի և Դանիէլի :

Դանիէլի օծութիւնն կատարելոյն զինի՝ Դա-
նիէլի կուսակիցք բազմացան . բայց կային բա-
զումք՝ որ իմանալով՝ թէ այս ամենայն չարեաց
ձնողքն են Ներսէս և Մանուէլ , թէպէտե ու-
նէին սէր և մտերմութիւն առ Դանիէլ , բայց
ատելով կատէին զներսէս և զՄանուէլ . Դանի-
էլի մտերիմ կուսակցաց մէջ կային բազումք
էջմիածնի միարաններէն , և Պօլսոյ կողմէն հա-
ւաքված եափսկոպոսներէն , որ Դանիէլին զգու-
շացուցին , թէ այնքան վատ է գնացել Ներսիսի
և Մանուէլի համբաւն ի Պօլսո , որ այն մայրա-
քազաքի ազգն թէ Դաւթեանք և թէ Դանիէլ-
եանք՝ Ներսիսի և Մանուէլի անունն դրել են
Նեստոր և Մակեդոն : Ներսէս նշմարելով՝ որ
Դանիէլի սրտի մէջ սկսաւ սառնութեան նշան-
ներ երեխլ , կարծեց՝ թէ Մանուէլէն է . վաս-
որոյ առիթ բերելով Գրիգորի գէպ ի Գրիգոր-
իալիս երթան , գրդեց Դանիէլին՝ որ Մանուէ-
լին ուղարկէ Եփրեմի վիճակն , և նա նորան աեղ
յատկացնէ Գրիգորիալուսոյ և Խրիմի կողմէ : Դա-
նիէլ՝ այս պատճառ յօրինելով՝ կամեցաւ Ներ-
սիսին և Մանուէլին չնորհել ձեռնադրութեամբ
եպիսկոպոսական կարգ . այլ երկոքին ևս հրա-
ժարեցան , ատելով՝ թէ արտաքյ էջմիածնի
չկամին եպիսկոպոսանալ , մինչ ինքեանք արտա-
քյ էջմիածնի տուին Դանիէլին կաթողիկոսու-

թիւն և օրինաւոր հրատարակեցին , և ազգին՝
ընդունելի կացուցին :

Գնաց Մանուէլ և որպէս բազէ հասաւ Գրի-
գոր արքեպիսկոպոսի յետեւէն , և բորբոքեց
անդ ըստ մտօրէնութեան Ներսիսի նոր կուիւ ,
որովհետեւ կաթողիկոսի կոնդակն ի ծոցին , և
Եփրեմի Առաջնորդական հրամանն ի ձեռին ,
և Ռուսաց տէրութենէն ևս հրովարտակ առաւ
որ կոչուի այն կողմանց առաջնորդական Փոխա-
նորդ , (յաջորդ կամ վիքար) . և հրամայեց՝ որ
թոյլ չտան Գրիգոր արքեպիսկոպոսին Եկեղեցի
գալ և փիլոն զգենուլ . այլ թէ կամի՝ առանց
փիլոնի թող ազօթէ ի թիւս ժողովրդեան : Այս՝
Դանիէլի անօրէնութիւնն չէր , այլ Ներսիսի
գիւտն էր , և Մանուէլի գործադրութիւնն ։
Այսու ամենայնիւ՝ Գրիգոր արքեպիսկոպոսն
ծոցն լի ունելով ոսկեով՝ երջանիկ էր և քան
զԴանիէլ , և քան զԴաւիթ , և քան զԵփրեմ , և
քան զամենայն Պատրիարքունս և կաթողիկոսս,
և քան զՆերսէս և քան զՄանուէլ , որ Գրիգորի
առջեւ միայն կարող էլին զդուռն Եկեղեցւոյ
փակել . այլ զրունք աշխարհականաց , թէ Հայոց
և թէ այլազգեաց , թէ տիկնանց և թէ օրիոր-
դաց մեծուհեաց միշտ լայնարձակ էր բաց . և
նորան՝ այն էր հարկաւոր և ցանկալի . իսկ վիճակի
Առաջնորդութիւնն էր երկրորդական իմունիք ,
որ թէ ստանայր՝ կ'ազատուէր Քորեպիսկոպոս
մականունէն :

Մանուէլի զնալոյն զինի՝ Ներսէս տեսաւ , որ
սամանեան տէրութեան մէջ չունի ապահովու-
թիւն . և իմանալով՝ որ ըստ իւր պատուիրելոյ

գեղմրդակիր Յօհաննէս արքեպիսկոպոսն արծ
դէն փախելէ ի Տփխիս, ինքն ևս հրաման առ-
եալ ի Դանիէլէ, եկաւ ի Տփխիս : Եւ տեսաւ՝ որ
գեղարդակիր Յօհաննէս արքեպիսկոպոսն ընկե-
րակցութեամբ Տփխիսոյ Առաջնորդի, (որոյ ա-
նունն մոռացել եմ, և որ վաղնջուց բարեկամ
էր թէ Դանիէլին, և թէ գեղարդակրին,) իւր-
եանց ձեռին գործիք արարեալ Սերորէ Պատ-
կանեան վարժապետի գրիչն, հասուցել են բա-
զում կարեոր նամականիք առ Ժողովուրդս
ցրուեալս ի Պօլիս, Եղիպտոս, ի Բերիա, Տիգրա-
սանակերտ, Անտիոք և ի Խորին Պարսկաստան,
և ի Հնդկաստան անդամ, ուրախ եղել յոյժ。
բայց չգտեալ առաջնորդական տան մէջ որ ի
սրահին տէր Ղազարի վանք, կամ փաշայ վանք
կոչեցեալ պարսպապատ հնակերտ շնուածոցն՝
ինքեան յարմար մաքուր սենեակ, տեղափո-
խեցաւ ի Խրճիթ բնակարանի Սերորէի Պատ-
կանեան, որ բնակէր յայնժամ ի տան Փիթոյ-
եանց աղայի, ի մերձակայս Մողնեայ սուրբ Գէ-
որդի եկեղեցւոյն և Մողնու կալ կոչեալ փոք-
րիկ որդոստային :

Դաւիթ կաթողիկոսն տեսնելով որ Դանիէլի
Հայրապետութիւնն՝ Ներսիսի և Մանուէլի ճար-
տարութեամբ, Եփրեմի և գեղարդակիր Յօ-
հաննէսի արքեպիսկոպոսաց գրութեամբ, և
Սերորէի Պատկանեան դրչութեամբ և նորա
երգոց թովչութեամբ և Դանիէլեանց համախո-
հից անխոնջ ջանիւք օրըստօրէ աւելի հաստա-
տութիւն առնլոյ առհաւատչեայքն ձեռք կը-
բերէ, և արդէն Ռուսաստան՝ իմանալով Յով-

աէփիայ անուամբ հնարած կտակի խարդակու-
թիւնն, սկսաւ երեանայ Խանին առանձին, ու
Ֆաթ Ալի Շահին առանձին թղթովք ակնարկել։
որ Դաւիթի կողմն պահելով չաշխատին Դանիէլի
իրաւունքն ժխտել և սկսաւ կրկին բուռն հարո-
կանել նախկին հնարներէն . և որովհետեւ առ-
անդամ մի բոնութեամբ էր այն գահն իւր
ճանին ձգել, կամեցաւ բոնաւորութեամբ հա-
տատուիլ։ Սուրբ Էջմիածնի ճոխութիւնն, որ
Ղուկաս կաթողիկոսն մթերելէր՝ գտաւ միաբա-
նից և գանձապետին և աւագ լուսարարին ան-
հնարին խոշտանգանք տալով, և սկսաւ ջամբել
Մէհմէտ Խանին, և ի ձեռն նորա Օսմանեան
Դրան Եպարքոսին, որ երգաբանն իւր երգոյ
մէջ այս չորս տողի մէջ համառօտելով կըպատ-
մէ, և կ'ասէ բորենաբար զգանձս իմ բրէ .
զըրբազան անօթս կրէ, Մէհմէտ Խանին միշտ
նուիրէ, զիս մերկ այրի կացուցանէ . ոհ. ինք։
Այս կաշառաց արգասիքն այն եղեւ, որ Դաւ-
իթի համախոն Պօլսեցի Հայոց խուժանն՝ Գրիգոր
Պատրիարքէն խլեց հովուական գաւազանն, և
միւսանգամ յանձնեց աքսորեալ Ենճեան Յօհան-
նէս արքեպիսկոպոսին : Սա իսկոյն Դաւիթի ա-
նունն սկսաւ եկեղեցւոյ մէջ յիշել տալ, և հրա-
ման հանեալ յօսմանեան տէրութենէն, զԳրի-
գոր ընկեցեալն ի Պատրիարքութենէ, և զԴա-
նիէլ Հայրապետն Հայոց ետ աքսորել ի սուրբ
Էջմիածին՝ մասնել ի ձեռս Դաւիթի, որ եղեւ
յամսեանն Հոկտ. 1802 ամի, մինչ նոր էին զը-
նացել Մանուէլ ի Գրիգորիալովիս, և Ներսէս Ք
Տփխիս :

Այս դարձեալ նոյն երդաբանն ողբալով կը-
քողոքէ այս չորս տողից մէջ . էարակիկլոն մըր-
թիկ յարոյց , զրդեշս և զդուքս նոր լիացոյց ,
զիմֆատրիարքն աստ վարեցոյց , գենճեան Յո-
հան անդ գճեցոյց . ո՞հ ինքնակալ կայսր Հա-
մայն Ռուսաց , յոյս փրկութեան իմ ի վշտաց ,
զերծով զիս ի Դաւթի ժանեաց :

Ցնծացաւ սիրտ Դաւթի՝ որպէս այն որ գտանէ
աւար բազում , երբ տեսաւ իւր ատելիքն կապ-
եալ առաջի իւր ածեալ . և զինի բազում անար-
դութեան և խոշտանգանաց՝ Դանիէլի միրուքն
կտրեց . զոր երդաբանն այսպէս է պատմել . թէ
զԱհարոնի մօրուս սափրէր : Բայց նշմարելով
միաբանից թախիծն , վախեցաւ որ յանկարծ
իւր ձեռքէն յափշտակելով ազատութիւն կու-
տան Դանիէլին՝ մատնեց Մէհմէտ Խանի ձեռն .
և նա Երևանայ բերդի մէջ եղ ի գիպահոջ : Եւ
այսպէս Դանիէլ , որ կամոք Ներսիսի եղել էր
կաթողիկոս , թէպէտ եհաս ի սուրբ Էջմիածին ,
այլ փոխանակ բազմելոյ յաթոռն թադէոսի և
սրբոյն Գրիգորի՝ յոր հրաւիրեալն էր կրկնակի
ընտրութեամբ՝ անկաւ ի բանտ մահապարտից :
Իսկ Գրիգոր Պատրիարքն՝ որ շղթայակից էր Դա-
նիէլի մնաց ի բանտին Էջմիածնի : Էջմիածին և
բանտ : Արդեօք այս բանտն՝ նորաստեղծեալ
ինչ արարչագործութիւն էր Դաւթի , թէ ժա-
ռանգ ութիւն էր մնացած յաւուրց մէծագոր-
ծութեանց Ղաղարու՝ որոց Դաւթ գտաւ հետե-
ռզ : Իսկ Ներսէս՝ որ կայր ի Տփխիս և բնակէր ի
տան Սերոբէ վարժապետի Պատկանեան , լսելով
թէ Դանիէլ կապահոք բերուեցաւ Էջմիածին ,

Կամեցաւ հասանիլ նմա յօդնու թշւն . բայց յան-
կարծ լսեց , որ Դաւթի կողմէն եկել են ինդրա-
կըք , և Վրաց մեծամեծաց կաշառք տալով
ստացել են իրաւունք ձերբակալ առնել զնա ,
և տանել յԷջմիածին , ստիպեցաւ թաքչիլ . և
թաքստեան տեղի չգտաւ ապահով քան զայն
սենեակ՝ ուր բնակէր ցարդ ի բնակարանի Սե-
րոբէ վարժապետի Պատկանեան , Այս թագուս-
տըն տեսեց ութ ամիս : Յորժամ Ներսէս եկն
զառաջինն ի տուն Սերոբէ վարժապետի Պատ-
կանեան , նա ունէր զերկուս ուստերս . յորոց
երիցագոյնն գէօրգ անուն ծնել էր ի 1799 , և
արդէն էր երեքամեայ . իսկ երկրորդն Գարբի-
էլ՝ որ ծնել էր ի 1802 Փետրվարի 26. էր ութա-
մսեայ : Ներսէս յետ ժամանակաց՝ երբ գտաւ
ապահովութիւն , մէկ նամակի մէջ նորհակալու-
թիւն գրելով առ Սերոբէ , վասն իւր ութա-
մսեայ հիւրընկալութեան , յորժամերկոքին ևս
էին աղքատ և հալածեալ . իւր թաքստեան
միջոցն նմանեցրել էր Եղիա Մարգարէի՝ Սարե-
փիթ այ Սիդոնացւոց ալրի կնոջ տանն պանդխ-
տութեան , և իւր կերակրելն՝ որ գիտէր՝ թէ
հրաշալի ալեր սափրոէն կամ իւղոյ կամ բսակէն
չէ՝ գրել էր ընդդէմ կամացն Յիսուսի գործ-
եալ , որ ասել էր , թէ ոչ էր արժան առնուլ
զհաց մանկանց և արկանել շանց : Բայց յառաջ
քան զպամելն՝ թէ Ներսէս այն ութամսեայ
ժամանակն՝ որ բռնազատեալ էր անձնապահ լի-
նել՝ ինչ գործով կըպարապէր Սերոբէ վարժա-
պետի սենեակի մէջ , կամիմ ասել թէ ինչ օդ-
նութիւն հասաւ նորան՝ որ այնու փրկեցաւ :

Արդէն Հերակլ թագաւորին որդին՝ և ժառան-
դըն գէորգի՝ վաղ էր մեռել, և նորա որդին և
Ժառանդն Դաւիթ արքայորդին՝ զինի մահու
Լազրով կուսակալի տարուել էր ի Ռուսաստան
Հրամանաւ ինքնակալին Պօղոսի Առաջնոյ, և
Վրաստան ընդունել էր Ռուսաց հպատակու-
թիւնն. վամորոյ և Վրացի իշխանք, որ Մելիք
Աբրահամի նման համախոհ էին Դաւթեանց՝
Ռուսաց մեծամեծաց թոյլտուութիւնն ունենա-
լով՝ բազում ինչ կանէին անպատիւ. ի նամա-
կաց Սերոբէի և գեղարդակիր Յօհաննէս արք-
եպիսկոպոսի իմանալով Եփրեմ՝ Ներսիսի վտանդն
բողոքեց առ կայսրն, և կայսերական հրովար-
տակ եկն առ կուսակալն Ռուսաց՝ որ Ներսիսն
ազատեն : Ռուսաց ոստիկանութիւնն և Դաւթի
որիկայքն միւնոյն ժամանակն իմացան Ներսիսի
թաքստեան տեղն . Ռուս.ք եկան փրկութիւն
տալ Ներսիսին, Դաւթեանք եկան մահ տալ
Ներսիսին . և միասին շուրջ պատեցին տունն :
Ապուզաւրեան տէր Մոսէսն հասաւ . ինքն քաջ
մարդ լինելով՝ Ներսիսին գօտին ձգեց Երդիքէն
և հանեց և յանձնեց Ռուսաց . այս պատճառաւ
Երդաբանն ասել էր թէ . . . անձն Ներսիսի՝
ըստ քաջութեանն տէր Մոսիսի՝ յանուն կայսերդ-
կորդեալ լինի :

ԳԼՈՒԽ ԶՈՐՈՐԴԻ

Ներսէս վարդապետն տեսանելով Սերոբէի
անխնամ վիճակն, և նորա կնոջ միայնութիւնն,
որ թէ զաւակաց խնամք առնէր՝ տնտեսութիւնն
կըմնար անխնամ . թէ տնտեսութեան միտ դը-
նէր, զաւակունքն կըմնային անայցել, այն նո-

բածին Գարբիէլ մանկան գաւառ առծիլ. կը-
դրկէր, դրկով կըմրջեցուցանէր, օրօրոցէն կը-
հանէր, օրօրոց կրդնէր, և իւր խապօտ ձայնով
օրօր կերգէր . և երբ մայրն Մարիամն կ'սկսէր .
ըստ տեղւոյ սովորութեանն վրացերէն օրօր ա-
ռել՝ խավ նանօ, վարդո նանօ նանօ . Ներսէս
աստիկ կըբարկանալոր, առ զայրոյթ սրտին
ծաղր կանէր, և անդադար մեղադրանք կըխօ-
սէր առ Սերոբէ Պատիկանեանն, որ նա կըներէ
և թոյլ կուտայ՝ որ իւր զաւակաց ականջն վրա-
ցերէնին ընտելանայ ի վսաս հայերէնի . Այս
պատճառաւ Սերոբէ վարժապետն Միսիթար
Աբրայի երգարանէն մէկ երգ՝ որ գիտէր ի բե-
րան՝ այնքան երգեց ի հաճոյս Ներսիսի, որ աչ
միայն Ներսէսն անդիր սերտեց, այլև իւր ան-
դրագէտ կինն սովորեցաւ, և աշակերտներէն
բազումք, որոց մէջ կային Միրախոռ Յովսէկի
որդին Բարսեղն, (Վասիլ Օսիփիչ Բէհրուդեան,)
և Միրիշիքէաբաշի Յովսէփի ոոդի Յօհաննէսն,
(իւան Օսիփիչ Ղորշանեանն) ևս ուսան, որ միշտ
Ներսիսին ձայնակից կըլինէին : Երգն այս էր .
Ննջեա՞ որդեակ, քաղցր և անոյշ, հանդիք
քնով և առ քեզ ոյժ, օրօր, օրօր, օրօր, օրօր,
Աստուած որդւոյս իմ օր օր օր :

Երկինք չէին քեզ բաւական, բայց ես եղէ
քեզ կայարան, օր օր և այլն .

Դու՝ որ յերկինս ահիւ պատօւիս, ձեռամբ
իմով աստին պատիս, օր օր .

Հրեշտակապետք յառաջ մատիք, հաւաքե-
ցէք որդւոյս ծաղիկ, օր օր :

Սուրբ Յօհաննէս մանուկ քաղցրիկ, չարժե-

զօրոր անդ համեղարտիկ :

Այլ մի երգեր՝ օր օր, օր օր, Աստուածորդւոյս
իմ օր օր օր :

Մինչդեռ Ներսէս չգիտէր թէ այս որո՞յ շա-
րադրութիւնն է, և կը կարծէր թէ Սերոբէինն է,
շատ կախորժէր, և միշտ այն կը մրմջայր քայց
երբ իմացաւ՝ որ այն Միսիթարայ Սերաստաց-
ւոյն է, Աստուած հեռի արասցէ, այնպէս բար-
կացաւ, ինչպէս որ եթէ Հրէից ռաբրիին խա-
բէութեամբ խոզի միս կերցուցած լինին . այն-
քան զայրացաւ, այնքան տրտնջաց, մինչև Սե-
րոբէ վարժապետն բռնադատեցաւ մէկ նոր օ-
րորօցի երգյօրինել, նոյնպէս ի դիմաց Աստուա-
ծածնի, նոր և այլ եղանակաւ . որովհետեւ նըն-
ջեաւ որդեակն Վրաց եղանակաւ էր : Այն ժա-
մանակն հայրս, Սերոբէ վարժապետն Պատկան-
եան, ի 1802 թուին վերջն շարադրեց այն օրօ-
րոցի երգն, որ Ներսիսին յոյժ հաճելի եղեւ :
Երգն էր ի բերանոյ Աստուածածնի, առ իւր
Աստուածորդին . և էր օրինակ այս :

Անհամեմատ և անսահման եղանակաւ յղացե-
լոյդ, օր օր օր օր :

Սքանչելի օրինակաւ ի կոյս մօրէս ծնեցելոյդ,
օր օր օր օր օր օր :

Ի Եսայեայ գուշակելոյդ, Էմմանուէլ մանկա-
ցելոյդ :

Ի Բէթլէհէմ յանշուք այրի իշխան հովիւ մեզ
յայտնելոյդ, օր օր օր օր :

Ի ռամկական դասուց հովուաց ընդ զօրս
Երկնից փառատրելոյդ, օր օր օր օր :

Նախապատռմ տեսանողաց բանից այսօր

կատարելոյդ :

Ծագմամբ լրւոյ աստեղ նորոյ մոգ արքայից
յայտնեցելոյդ, օր օր օր օր :

Մինչև ծնեալ քո ի կուսէս՝ յոլորտոս Երկրէ
հռչակելոյդ, օր օր օր օր օր :

Ոսկի կնդրուկ պատարագօք Երկրպագեալ
պաշտեցելոյդ :

Այս երգն Ներսէս չատ էր սիրել, և միշտ եր-
գել կուտայր իմացողներուն, և կը կամէր ազգ-
ային առնել. այդ պատճառաւ բազում օրի-
նակք պարզագեց և իւր ամեն բարեկամաց
ցրուեց :

Այս միջոցներն եկաւ Պօլիսէն Սերոբէի կրսեր
եղբայրն Քերոբէն, որ սքանչելի ձայն ունէր
իւր հօր նման տէր Պետրոսի Պատկանեան, և
բերեց Պօլիսէն կենէ թօփսալանտըն դաղըն
գումանի՝ տաճկերէն երգի եղանակն, որ աւելի
հաճելի լինելով Ներսէս վարդապետին՝ հարկ
դրեց Սերոբէ վարժապետին այն եղանակի վե-
րայ ևս երգ մի յօրինել. և նա 1803 թուին շա-
րադրեց ի բարձունու երկնից յարեւլու ուղենեալ
երգն . որ վերահաս վերափոխման տօնին երգե-
ցին երկու եղբարք : Սորա իմաստն հանել էր
մէկ երեւելի իտալացի նկարչի պատկերէն, որ
ձեացուցել էր զսուրբ կոյսն Մարիամ՝ յաթոռ
բազմեալ, ունելով ի գերկս զնորդին իւր ման-
կացեալ Աստուածն . շուրջ զաթոռովն դասք
անմարմին զուարթնոց, ի գլուխ նորա պսակ .
զանձամբ նորա արեգակն, ընդ գարշապարօքն
լուսին : Այս երկու երգն Ներսէս մինչև իւր հայ-
րապետութեան վերջին տարիքն գիտէր անգիր

և կըսիրէր յոյժ . և երբ եկեղեցւոյ մէջ կըսէր՝
փափաքտնօք ունկն կըդնէր և հեղիկ ձայնակից
կըլինէր .

Ներսէս՝ երգոց ունկնդնելոյ միջոցն կամտա-
զեր շարադրել տալոյ ժամանակն ևս չէր մոռա-
նար՝ թէ կայ Հայոց Հայրապետն կաթողիկոսն
Դանիէլ ի բանտի արդելական , և թէ էջմիա-
ծինն է ի տառապանս ի ձեռու Դաւթի . այնքան
աղերսագիր մատուցանել տուեց Եփրեմին ի դի-
մաց բանտարկեալ Դանիէլի առ կայսերական
Դուռն Ռուսաց , որ կայսրն հրամայեց Վրաս-
տանի կուսակալ Ցիցիանովին երթալ յԵրկան ,
աղատել զԴանիէլ և բազմեցուցանել յամոռ
Հայրապետական : Ցիցիանով սակաւածեռն զօ-
րօք գնաց Գանձակայ վերայ , Զաւաթ Խանն ել
զօրութեամբ Պարսից ընդդէմ Ռուսաց , պա-
տերազմեցաւ , յաղթուեցաւ և փախաւ մտաւ
բերդն : Ռուսաց զօրքն պաշարեցին Գանձակն,
և սկսան գնդակոծ առնել . Պարսից Արիֆէի գի-
շերն որ մեծ բայրամ էր , մինչ ի լոյս պատե-
րազմեցան . լուսացաւ Յունվարի երեքն 1804
ամի . քաղաքն առնվեղաւ : Այս պատերազմի
մէջ Ռք ընկալաւ կոմն վարոնցովի որդին Մի-
լյեմենովին որ գեռ ևս իւնքէռ էր , և
պառկեցաւ Ներսիսի խցի մէջ էջմիածին .
որէն բարեկամացան , և մինչև ի մահ
բառեկամ մնացին :

Յաթ Ալի շահն լսելով որ Գանձակ առնվեցաւ
և Զուաթ խանն սուրինահար մեռաւ . եկաւ Ե-
րկան , հանել տուեց զԴանիէլ բանտէն , և կա-
մեցաւ ըստ թելադրութեան Դաւթիթ կաթողի-

կոսի՝ առ Ցիցիանովն առաքել պատդ ամաւոր
հաշտութեան . և յորժամԴանիէլ չի յանձն առ-
նոյր , կըհրամայէ տանիլ յաքսորս ի Մարազայ .
ուր և մինչև ի 1808 ամն : Դաւթիթ կաթո-
ղիկոսն ժամ գիպուկ համարելով՝ գանձ բազում
բերել տուեց Գրիգոր Արքեպիսկոպոսէն , և ձե-
ռամբ Մելիք Աբրահամի կաշառաբեկ առնելով
Շահի շրջապատն եղեալ Խաններու և Բէգերու
բազմութիւնն , հրաման հանել տուեց Շահէն
առ Մարազայի խաննոր Դանիէլի կեանքն բառ-
նալ տայ : Սորա աղագաւ լացել էր երդաբանն
այս չորս տող երգով .

Կամակից են եղեռնութեան՝ չիք Գրիգորն
այն որ յաքսորման .

Մելիք Աբրամ ծեր Շուշանեան , և այլք
որ են մոռք ունայն :

Լոււել էր այն ժամանակն ի 1804 թուին ի
Տփիսիս և ի բազում տեղիս , և Պէրպէռնեանն
ևս կըյիշէ իւր հարիւրամեթի Հայոց Պատմու-
թեան մէջ , թէ երբ Խանն ուղարկել է դահիճ
ի բանտն մահ տալ Դանիէլին , դահիճն տեսել
է՝ որ Դանիէլի մօտ նստած են երկու առիւծք .
զարհուրանօք փախել է , և եկել պատմել Խա-
նին : Խանն անձամբ գնացել է , և տեսել է նոյնն .
վասնորոյ պատուով հանել է բանտէն զԴանիէլ
և մի հայազգի մեծատան գերդաստանի մէջ
անդորր բնակութիւն է տուել : Հայրս՝ այս լսել
էր ի բազմաց , բայց աւելի կարեորութիւն չէր
տուել այս լրոյն , մանաւանդ գեղարդակիրն ,
և Գրիգոր Պատրիարքն և այլ երկելիք ի Դա-
նիէլականաց՝ կասեն եղել է , թէ այդ Ներսիսի

Հնարագիտութիւնն է , որ կարողացելէ հրաշա-
դէտ կիւսահմայ Պարաից դիւրահաւանութենէն
օդուտ քաղել : Այնուհետև ներսէս եկաւ Վա-
րոնցով կոմի որդւոյ հետ Տփխիս . և որովհետև
ժանտախտի պատճառաւ Սերոբէ Պատկանեան
գնացել էր Մուխրան , նու ևս գնաց և անդ շա-
րադրել տուեց Սերոբէ վարժապետին այն երգն,
«Սըսահար եղեր չար իշխան՝ թշնամի խաչին Զա-
ւաթ խան»: Որոյ վերջին տունն է . Ծադէր լոյս
տասին Յունվարի , հազար ութ հարիւր չորս ամի ,
մինչ զսոյն երդարանեցի , ըստ ձայնին Ուսա-
մարթօպի . որ է երգ մի վրաց :

Ներսէս Հատացաւ այսու , այլ աղաչեց որ
Սերոբէ վարժապետն նոր ի նորոյ և ընդարձակ
փոքր ինչ երգէ Գանձակայ առումն . և նա գրեց
այն դիմառնական երգն . Ընդէր է քեզ կաս-
կած կրել , կամ զ՛րուսաց գալն ի միտ բերել
և այլն , որոյ ի վերջին տան կասէ , ի ծագել ե-
րից Յունվարի , հազար ութ հարիւր չորս ամի ,
ութերորդ սքանչելիք գործի , անդ-բանցեալ
զեօթեամբ.ք աշխարհի : Եւ այս այն պատճառաւ
ութերորդ սքանչելիք կըկոչէ , որովհետև Նա-
տիր Շահն մինչ միապետէր՝ երկերիւր հազարօք
շրէր , զգանձակ առնուլ չզօրէր . վասնզի ա-
նառիկ բերդ էր : Ներսիսի Սերոբէի յետևէն
ի Մուխրան երթան ունէր առանձին շարժա-
ռիթ : Եփրեմ արքեպիսկոպոսն՝ որ Սերոբէին
յոյժ հարեւացի կըճանաչէր , բայց նորա հօրն
և պատուն քաջածանօթ էր , նորա գրիչն սիրե-
լով՝ կամեցաւ լիւր մօտ ունենալ . բայց Սերոբէն
չկամեցաւ երթալ , և ոչ նորա բարեկամք խոր

հուրդ տուին . մանաւանդ տէր Առաքելն , որ
ընդ վոյթ զիւր որդին տէր Մելքիսեդեկն ու-
ղարկեց : Լանց այլ ևս ամ մի կամերկու , դար-
ձեալ հրաւեր գրեց Սերոբէին . առ այս նուագ-
գրել էր և Ներսիսին . որ Սերոբէի կամքն հա-
մոզէ , և ուղարկէ Երբ Ներսէս գնաց Մուխրան
տեսաւ որ Սերոբէն շարադրել է ի վերայ հրն-
դեկի հարուածոցն Տփխիսայ այս Երգն . «Սըս-
ամփելի բարկութի Ցեառն մինչ մեզ հասանէր»:
Որոյ ի վերջին տանն ասած էր . էր հազար ութ
հարիւր և չորս՝ օրն նոր տարի , մինչ ի տղմուտ
Մուխրանի կարճոյ զայն յայտ արարի : Եփրեմ
նոյնն գրել էր և առ Երեւանցի աւագ Վահրամ-
եանն , որ նա ևս համոզէ Սերոբէին գալ ի Ռու-
սաստան : Աւագ Վահրամեանն ևս ձայնակից
եղել Ներսիսին , և Երկոքին ի բազում ժամա-
նակս անդադար յորդոր կըմատուցանէին Սե-
րոբէին երթալ առ Եփրեմ : Վերջապէս Սերոբէ
Պատկանեան յօժարեցաւ : Այս միջոց Ներսէս
անդադար երթեեկ կանէր յէջմիածին և յերե-
ան և ի թիֆլիզ և ի Մարազպայ , ուր ամենայն
Դաւթեանք և Պարսիկք նորա մահն իբրև զոհ
մատուցեալ Աստուծոյ ի հոռ անուշից կըհամա-
րէին , և յատկապէս Շահն և Արքայորդին և
Երեւանայ Սարդարն և ամենայն մեծամեծք
Պարսից՝ Ներսիսի անունն առ ատելութեան
Նուրսուզ կըկոչէին , և ուր ուրեք դատանէին՝
պիտի սպաննէին :

Առ վերջին աւուրս 1805 ամի , մինչ Սերոբէ
վարժապետն արդէն պատրաստուել էր յուղի
անկանիլ , Պետերբուրդէն մէկ ոտանաւոր բե-

լին, որպէս թէ աղայ Մարդարայ Զաքարեան խոջենցի շարադրած. բայց Ներսէս բազում ամօք յառաջ քան զայն տեսել էր և ընթերցել ի Պօլիս, և Սերոբէ վարժապետն ևս յետ դառնալցն ի Վանայ սրբոյն Ղաղարու և ի Թրեստէ, նոյնպէս հանգիպէլ էր և կարդացել. որոյ սկըսուածն էր. Արի անձն իմ մեկուսացիր՝ ի բազմութեանց այս հեռացիր, զի ժամանակն է այլայլեալ, զուտ բարեկամ չմնաց :

Ներսէս վարդապետն և Վահրամեան Աւագն սկսան ստիպել Սերոբէ վարժապետին, որ նա այն ոտանաւորի հակառակն դրէ : Սերոբէ վարժապետն բացէ ի բաց հրաժարեցաւ, և նզով իւք և երդմամբ ևս հաստատեց՝ որ այն ոտանաւորին հակառակ դրել բնաւին չի յօժարիր, մանաւանդ այն պատճառաւ, որ աղայ Մարդարըն՝ որպէս ամենեցուն յայտնի էր, նորա բարերարն է, երախտաւորն է, և նորա ուսման պատճառն է. և որ առաւելն է, այն ոտանաւորի մէջ չկայ ինչ հերքելի, որ ծայրէ ի ծայր ճշմարտութիւն է. բայց հնար չեղաւ Ներսիսի կամսպաշտութեան յաղթել երկուստեք բըռնադատեցին, և նա ակամայ յանձն առաւ գըրել յայտնի ճշմարտութեան դէմ. ուր առաջին ոտանաւորն կըվերջացնէր չմնաց ասելով, սա ամենայն ուրեք մնաց կասէր :

Այս օրերս պիտի գայր Երեանէն աւագ Վահրամեանի եղբայրն Գրիգոր Վահրամեանն. և Սերոբէ վարժապետի կինն՝ որ յղի էր՝ մերձ էր արդէն յերկունս: Ծնաւ նա իւր երրորդ որդին որ անուանեցին Պետրոս, կնքահայր եղել վահ-

րամեան Գրիգորն. և յետ քանի աւուրց Ներսէս նոր նամնակ ստանալով Սերոբէի մասին՝ Եփուրեմէն, չափազանց թախանձանօք ստիպեց յուղի անկանիլ. բայց Դաւթեանց մէջէն բազումք կային՝ որ չկամէին՝ որ Սերոբէ անցանէ անդք քան զլերինս կովկասու: Վասնորոյ ժողովելէին նորա փոքրիկ վարժարանի մէջ գեղարդակիր Յօհաննէս Յըքեպիսկոպոս, Գրիգոր Պատրիարք, Ներսէս, աւագ Վահրամեան, Փիթոյեանց աղա, Հեքիմ Թաթուլ, Հեքիմ աղա (Ագաֆօն Դաւիթիչի հայրն,) և կըխօսէին, մինչ Սերոբէն իւր թղթերն ի կարգի կըդնէր և իւր ճանապարհի պայիսակի մէջ կըպահէր. յանկարծ Ներսիսի աչքին մի թուղթ երևեցաւ, յափշտակեց այն թուղթն և սկսաւ ընթեռնուլ: Սերոբէ վարժապետն մի ոտանաւոր էր սկսել, բայց դեռ չէր պարզագրել, և ոտանաւորի առաջին երկու տունն այս էր,

Ի Բաբելոն տիպ դժոխոց՝
վառեալ վարի անորակ բոց,
Որ ոչ պագցէ երկիր կոոց՝
իսկոյն անկցի յանշէջ հնոց :

Աւաղ աւաղ՝ ազգ Վրամեան՝
յոխորտածայն, այժմ անձայն՝

Եմ լալի, այլ դու ողբալի:
Կերպաւորին իդէայի՝

զտեսակաւ պարագայի,
Ոդոց ոդել զոգւոյ տեսակ՝

արտաքոյ է Փիզիգայի: Աւաղ և այլն՝
Ներսէս վարդապետն այս թուղթն ծալեց, և
Երեց ծոցն և ասաց. այս այն ժամանակ կըդար-

ձուցանեմ՝ քեզ՝ երբ կըհանդիպինք իրերաց
միւսանգամ Եփրեմի դահլիճն : Եւ այսպէս այն
ոտանաւորն կորաւ . միայն երկու տունն՝ որ
գրելոյ ժամանակն միտքն էր պահել՝ մնացին , և
միւս օրն Ներսէս Արուղաւրեան տէր Մովսէսին
յանձնեց , որ Սերոբէի հետ ուղեկից լինի և ան-
ցուցանէ կովկասու լեռներէն , և հասուցանէ
մինչև Մողեակ . և այսպէս պատճառ տուաւ
որ հայրս Տփխիսէն ելաւ և գնաց Եփրեմի վի-
ճակն ի Ռուսաստան , ուր և հասաւ Եփրեմին ի
Ղզլար Քաղաքի :

ԵԵՐՈՒՆԻ ՊԱԲՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ



